

## ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2011 թ. մարտի 2-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 31 ներկայացուցիչ մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման դերն ու կարևորությունը» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. մարտի 4-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման շուրջ կլոր սեղանի քննարկումներին,
- ✓ 2011 թ. մարտի 4-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը և Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Երեխաների վիճակն աշխարհում «Պատանեկություն. հնարավորությունների տարիք» զեկույցի շնորհանդեսին,
- ✓ 2011 թ. մարտի 11-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Հ. Եղիազարյանը և առաջին կարգի մասնագետ Ռ. Շաբոյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «UNIDAF տարեկան վերանայում» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2011 թ. մարտի 15-16-ը ՀՀ ՎՊԽ անդամ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Անտառի ազգային ծրագրի օժանդակության նախագծի գործողությունների մեկնարկ» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. մարտի 16-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 46 ներկայացուցիչ մասնակցել են ք. Երևանում կայացած «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը» ԹՎԻՆԻՆԳ ծրագրի բացման արարողությանը,
- ✓ 2011 թ. մարտի 21-23-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Շաբոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հիմնադրման 10-ամյակին նվիրված միջոցառումներ» թեմայով հանդիպմանը,

- ✓ 2011 թ. մարտի 22-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մանկական վնասվածքների գրանցման համակարգի բարելավում» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2011 թ. մարտի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Աղազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Տարածքային զարգացման հայեցակարգի ներկայացում» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2011 թ. մարտի 24-26-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 43 ներկայացուցիչ մասնակցել են ք. Ծաղկաձորում կայացած «ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի արդյունքների ամփոփում և 2011թ. հիմնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների քննարկում» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2011 թ. մարտի 25-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Աղազարյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների միջտարածաշրջանային և մերձսահմանային համագործակցության հարցերով խորհրդի նիստին,
- ✓ 2011 թ. ապրիլի 7-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Եվրոպայի հարևանության քաղաքականության մեխանիզմի (ԵՀՔՄ) շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի (ՇՄՏՄՀ) վերաբերյալ ազգային հանդիպմանը,
- ✓ 2011 թ. ապրիլի 8-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Կենսաթոշակային համակարգերի բարեփոխումների տարբերակների վերլուծության իմիտացիոն մոդել» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. ապրիլի 8-10-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կայուն զարգացման

ծրագրում մոնիթորինգային գենդերային ցուցանիշների ներմուծում» թեմայով սեմինարին,

- ✓ 2011 թ. ապրիլի 20-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Մարկոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիք» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. ապրիլի 22-ին ՀՀ ՎՊԽ անդամ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման ազգային խորհրդի նիստին,
- ✓ 2011 թ. ապրիլի 28-ից մայիսի 1-ը ՀՀ ՎՊԽ անդամ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է Սյունիքի մարզում կայացած «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ Հայաստանի լեռնային էկոհամակարգի հարմարողականության բարձրացում» թեմայով սեմինարին:
- ✓